

ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)

2018թ. հուլիսի 10-ին Վարդան Ապրեսյանի և Քրիստինե Սաղաթեյանի միջև հասարակ գրավոր ձևով կնքվեց փոխառության պայմանագիր, որով Վարդան Ապրեսյանը (փոխատու) Քրիստինե Սաղաթեյանին (փոխառու) տրամադրեց 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով անտոկոս փոխառություն՝ 1 (մեկ) ամիս ժամկետով (մինչև 2018թ. օգոստոսի 10-ը): Փոխառության պայմանագրի «Վեճերի լուծման կարգը» բաժնում նշվեց, որ պայմանագրից ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունները անարդյունք լինելու դեպքում՝ օրենքով սահմանված կարգով:

2018թ. օգոստոսի 11-ին, ի պատասխան Վարդան Ապրեսյանի բանավոր պահանջի, Քրիստինե Սաղաթեյանը հրաժարվեց վերադարձնել փոխառության գումարը: 2018թ. սեպտեմբերի 1-ին և սեպտեմբերի 10-ին Վարդան Ապրեսյանը հեռախոսային զանգերով Քրիստինե Սաղաթեյանից կրկին պահանջեց վերադարձնել փոխառության գումարը, սակայն Քրիստինե Սաղաթեյանը կրկին հրաժարվեց:

2018թ. սեպտեմբերի 15-ին Վարդան Ապրեսյանը դիմեց դատարան: Ներկայացված հայցի առարկան էր՝ «Քրիստինե Սաղաթեյանից հօգուտ Վարդան Ապրեսյանի բռնագանձել 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ»: Հայցի հիմքում դրվեցին փոխառության պայմանագրի կնքման, փոխառության գումարի տրամադրման, փոխառության պայմանագրի ժամկետը լրացած լինելու և Քրիստինե Սաղաթեյանի կողմից փոխառության գումարը վերադարձված չլինելու փաստերը: Հայցադիմումի մեջ նաև նշվեց, որ Վարդան Ապրեսյանը բազմիցս բանավոր պահանջել է Քրիստինե Սաղաթեյանից վերադարձնել փոխառության գումարը, սակայն իր պահանջները չեն բավարարվել: Փոխառության պայմանագրի բնօրինակը ներկայացվեց հայցադիմումին կից:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վերադարձրեց Վարդան Ապրեսյանի հայցը: Որպես հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման իրավական հիմք՝ դատարանի կողմից վկայակոչվեց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, այն է՝ հայցվորը չի պահպանել մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման օրենքով կամ պայմանագրով նախատեսված արտադատական կարգը: Իր որոշման մեջ դատարանը նշեց, որ Վարդան Ապրեսյանի կողմից չեն ներկայացվել ապացույցներ առ այն, որ իր և

Քրիստինե Սաղաթեյանի միջև նախքան դատարան դիմելը տեղի են ունեցել բանակցություններ, մինչդեռ բանակցելու պահանջը ուղղակիորեն սահմանված է կողմերի միջև կնքված փոխառության պայմանագրով:

Հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը Վարդան Ապրեսյանի կողմից բողոքարկվեց ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Որպես վերաքննիչ բողոքի հիմք՝ Վարդան Ապրեսյանը նշեց, որ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, որը չպետք է կիրառեր: Որպես վերաքննիչ բողոքի հիմնավորում՝ Վարդան Ապրեսյանը նշեց, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածը սպառիչ սահմանում է այն փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է կցվեն հայցադիմումին, և այդ հոդվածը հայցվորին չի պարտադրում հայցադիմումին կից ներկայացնել վեճի կարգավորման արտադատական կարգը պահպանված լինելումասին ապացույցներ:

Քննելով Վարդան Ապրեսյանի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշեց այն բավարարել և վերացնել հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը: Որոշումը վերացվելուց հետո Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կայացրեց որոշում՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին և նշանակեց նախնական դատական նիստ:

Առաջին նախնական դատական նիստի ընթացքում (մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը) Քրիստինե Սաղաթեյանը հայտարարեց Վարդան Ապրեսյանի կողմից ներկայացված փոխառության պայմանագրի ոչ իսկական լինելու մասին: Որպես հիմնավորում՝ Քրիստինե Սաղաթեյանը նշեց, որ թեև փոխառության պայմանագրում ամրագրված է, որ ինքը ստացել է փոխառության գումարը, սակայն իրականում ինքը Վարդան Ապրեսյանից որևէ գումար չի ստացել:

Հիմք ընդունելով Քրիստինե Սաղաթեյանի հայտարարությունը, դատարանը, կողմերի հետ ապացուցման ենթակա փաստերի շրջանակը քննարկելիս, նշեց, որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի, Վարդան Ապրեսյանը, որպես փոխառության պայմանագիրը ներկայացրած անձ, պետք է ապացուցի դրա իսկական լինելը և մասնավորապես այն փաստը, որ փոխառության գումարը Քրիստինե Սաղաթեյանի կողմից իրականում ստացվել է: Ընդ որում, դատարանը նաև նշեց, որ, քանի որ Քրիստինե Սաղաթեյանի կողմից վիճարկվում է փոխառության պայմանագրի իսկությունը, հետևաբար փոխառության գումարի տրամադրման փաստը պետք է ապացուցվի ոչ թե փոխառության պայմանագրով, այլ՝ որևէ ուրիշ թույլատրելի ապացույցով: Վարդան Ապրեսյանը խնդրեց հետաձգել դատական նիստը և իրեն հնարավորություն տալ ներկայացնել համապատասխան ապացույցներ: Դատարանը

բավարարեց Վարդան Ապրեսյանի միջնորդությունը և նշանակեց ևս մեկ նախնական դատական նիստ:

Հաջորդ նախնական դատական նիստին (մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը) Վարդան Ապրեսյանը դատարանին ներկայացրեց գաղտնի եղանակով կատարված տեսագրություն, որը պարունակում էր իր և Քրիստինե Սաղաթեյանի միջև 2018թ. օգոստոսի 11-ին տեղի ունեցած խոսակցությունը: Տեսագրությունը կատարվել էր փողոցում, առանց Քրիստինե Սաղաթեյանի իմացության: Տեսագրությունից երևում էր, որ Վարդան Ապրեսյանը Քրիստինե Սաղաթեյանից պահանջում է վերադարձնել փոխառության գումարը, իսկ Քրիստինե Սաղաթեյանը առարկում է՝ պատճառաբանելով, որ տվյալ պահին գումար չունի: Տեսագրությունը ներկայացվեց գրավոր միջնորդությամբ, որում նշված էր, որ այն կատարվել է 2018թ. օգոստոսի 11-ի երեկոյան, Երևան քաղաքի Ամիրյան փողոցում, իր կողմից, Samsung մակնիշի հեռախոսի տեսախցիկով: Միջնորդության պատճենը և տեսագրության կրիչի կրկնօրինակը տրամադրվեցին Քրիստինե Սաղաթեյանին: Քրիստինե Սաղաթեյանը առարկեց տեսագրության թույլատրելիության դեմ՝ նշելով, որ այն կատարվել է առանց իր իմացության, և հետևաբար՝ անթույլատրելի ապացույց է: Հիմք ընդունելով Քրիստինե Սաղաթեյանի առարկությունը՝ դատարանը նշեց, որ տեսագրությունն անթույլատրելի ապացույց է, ուստի չի հետազոտվելու և հանվելու է ապացույցների կազմից: Վարդան Ապրեսյանը խնդրեց ևս մեկ անգամ հետաձգել դատական նիստը: Դատարանը բավարարեց Վարդան Ապրեսյանի միջնորդությունը և նշանակեց ևս մեկ նախնական դատական նիստ:

Հաջորդ նախնական դատական նիստին դատարանը կայացրեց ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում: Ըստ դատարանի որոշման՝ Վարդան Ապրեսյանը պետք է ապացուցեր փոխառության պայմանագրի կնքված լինելու և փոխառության գումարը Քրիստինե Սաղաթեյանին վճարված լինելու, ինչպես նաև՝ փոխառության պայմանագրի ժամկետը լրացած լինելու փաստերը: Քրիստինե Սաղաթեյանը պետք է ապացուցեր իր կողմից փոխառության գումարը վերադարձված լինելու փաստը: Դատարանը կողմերին տրամադրեց վերջնական ժամկետ՝ ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու համար:

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանի որոշումը լսելուց հետո Վարդան Ապրեսյանն առարկեց դրա դեմ՝ նշելով, որ Քրիստինե Սաղաթեյանը նման փաստ չի վկայակոչել, ուստի և նրա վրա չի կարող դրվել փոխառության գումարը վերադարձված լինելու փաստի ապացուցման պարտականությունը: Վարդան Ապրեսյանը նշեց, որ այդ փաստն այլևս չի կարող էական լինել գործի լուծման համար, քանի որ պատասխանողի կողմից այն չի վկայակոչվել: Ելնելով վերոգրյալից՝ Վարդան Ապրեսյանը

դատարանին միջնորդեց փոփոխել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը: Ի պատասխան Վարդան Ապրեսյանի միջնորդության, Քրիստինե Սաղաթեյանը նշեց, որ իրականում ինքը փոխառության գումարը վերադարձրել է, վկայակոչում է այդ փաստը և պատրաստ է այն ապացուցել: Վարդան Ապրեսյանն առարկեց Քրիստինե Սաղաթեյանի հայտարարության դեմ՝ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածը:

Լսելով կողմերին՝ դատարանը որոշեց Վարդան Ապրեսյանի միջնորդությունը մերժել հետևյալ պատճառաբանությամբ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը թույլատրում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը փոփոխել միայն օրենքով սահմանված որոշակի դեպքերում, որոնք տվյալ դեպքում առկա չեն: Քանի որ դատարանը կողմերին տրամադրել էր վերջնական ժամկետ՝ ապացույցներ և/կամ դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու համար, դատական նիստը հետաձգվեց և նշանակվեց ևս մեկ նախնական դատական նիստ:

Հաջորդ նախնական դատական նիստին (որը ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու վերջնաժամկետն էր) Քրիստինե Սաղաթեյանը պնդեց, որ փոխառության պայմանագրի վրա իր անվան դիմաց դրված ստորագրությունը իրեն չի պատկանում: Դատարանը սեփական նախաձեռնությամբ որոշեց նշանակել դատաձեռագրաբանական փորձաքննություն՝ այդ հարցը պարզելու նպատակով: Որոշումը կայացնելուց հետո դատարանը հայտարարեց 20 (քսան) րոպե ընդմիջում՝ կողմերին առաջարկելով ներկայացնել Քրիստինե Սաղաթեյանի ստորագրության նմուշներ, որպեսզի փորձագետը կարողանա դրանք համեմատել փոխառության պայմանագրի վրա դրված ստորագրության հետ: Ընդմիջումն ավարտվելուց հետո Քրիստինե Սաղաթեյանը դատարան չներկայացավ, իսկ Վարդան Ապրեսյանը դատարանին ներկայացրեց մի շարք փաստաթղթեր, որոնք, իր պնդմամբ, ստորագրվել էին Քրիստինե Սաղաթեյանի կողմից:

Փորձաքննության արդյունքում դատարանը ստացավ փորձագետի գրավոր եզրակացություն, որի «Առաջադրված հարցերի պատասխաններ» բաժնում նշված էր հետևյալը. «Եթե որպես ելակետ ընդունենք այն, որ դատարանի կողմից փորձագետին տրամադրված լրացուցիչ փաստաթղթերում առկա ստորագրությունները միանշանակ պատկանում են Քրիստինե Սաղաթեյանին, ապա կարող ենք միանշանակ եզրահանգել, որ նրան է պատկանում նաև փոխառության պայմանագրի վրա դրված ստորագրությունը»:

ՀԱՐՑԵՐ

ՀԱՐՑ 1

Գնահատել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման օրինականությունը: Արդյո՞ք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը ճիշտ է վարվել՝ վերացնելով այն:

ՀԱՐՑ 2

Գնահատել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիրքորոշման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառելիության վերաբերյալ:

ՀԱՐՑ 3

Գնահատել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիրքորոշման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ Վարդան Ապրեսյանի կողմից ներկայացված տեսագրության անթույլատրելիության վերաբերյալ:

ՀԱՐՑ 4

Գնահատել դատարանի՝ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման և կողմերի՝ այդ կապակցությամբ ներկայացված միջնորդությունների, դիրքորոշումների ու հայտարարությունների հիմնավորվածությունը: Արդյո՞ք դատարանը ճիշտ է բաշխել ապացուցման պարտականությունը: Արդյո՞ք դատարանը ճիշտ է պատճառաբանել այս հարցի կապակցությամբ Վարդան Ապրեսյանի ներկայացրած միջնորդությունը մերժելու վերաբերյալ իր որոշումը:

ՀԱՐՑ 5

Գնահատել դատարանի գործողությունները՝ դատաձեռագրաբանական փորձաքննության նշանակման կապակցությամբ: Գնահատել ստացված փորձագետի եզրակացության թույլատրելիությունը և ապացուցողական նշանակությունը: